ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԻՊԱ-ՄԱԱՊՁԲ-26/13

ք. Երևան « 3 » մարտ 2026 թ.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ-ը ի դեմս աշխատակազմի գլխավոր քարտուղար Անդրանիկ Եղոյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Շող Ար» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Կ. Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **300 150 /երեք հարյուր հազար մեկ հարյուր հիսուն/** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[1]:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը

---

[1] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը,

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում սույն ենթակետի կիրառման դեպքում գործակալ չի կարող հանդիսանալ ՀՀ կառավարության 20.06.2025թ. թիվ 817-Ա որոշմա ն 2-թդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված կազմակերպությունը:[3]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[4]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

---

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[5]

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 56ա ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011023067 ՀՎՀՀ 02572073	<<Շող Ար>>ՍՊԸ Ք.Երևան Մանթաշյան շենք 8բն 8 Ինեկո բանկ ՓԲԸ 2053122056071001 ՀՎՀՀ 02289417
Գլխավոր քարտուղար՝ Անդրանիկ Եղոյան	Տնօրեն՝ Կարեն Պողոսյան
Digitally signed by YEGHOYAN ANDRANIK 3402900629 Date: 2026.03.04 15:43:42 AMT	POGHOSYAN KAREN 1612830056 Подписано цифровой подписью: POGHOSYAN KAREN 1612830056 Дата: 2026.03.03 22:31:16 +04'00'
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[5] *Եթե գնորդը հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝«վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական տալու» բառերով:*

Հավելված N 1
« 3 » մարտի 2026 թ. կնքված
ՄԻՊԱ-ՄԱԱՊՁԲ-26/13 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	39221410/1	ավելներ	Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական, քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը (35-40) սմ: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	հատ	900	4 500	5	ք. Երևան, Պուշկինի 56ա	5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 4-րդ եռամսյակի ընթացքում, մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:
2	39221430/1	խոզանակ-սպունգ ապակի մաքրելու համար, ռետինե	Ապակի մաքրելու համար ձող ռեզինով և սպունգով: Բացվող ձողի երկարությունը փակ վիճակում 120 սմ և ավելի, ռեզինի և սպունգի երկարությունը 25սմ և ավելի: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	հատ	1 700	5 100	3	ք. Երևան, Պուշկինի 56ա	3	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 3-րդ եռամսյակի ընթացքում մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:
3	39221490/1	սպունգնե	Սանիտարահիգիենիկ նշանակության,	հատ	200	2 600	13	ք. Երևան,	13	

		ը	խորանարդաձև կամ ուղղանկյուն, (12x7) սմ չափի, հաստությունը՝ 3 սմ, մի կողմից երեսպատված արհեստական կտորով: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:					Պուշկինի 56ա		Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 2-րդ եռամսյակի ընթացքում մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:
4	39224331/1	դույլ պլաստմասե	Դույլ պլաստմասե՝ Դույլի հավաքածու, դույլի տարողականությունը 10լ, հատակ մաքրելու ձող, հատակ մաքրելու վերջույթ բարձր ներծծող բամբակե թելերով, դույլը պետք է ունենա հատակ մաքրելու վերջույթը քամելու հարմարանք: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	հատ	3 500	10 500	3	ք. Երևան, Պուշկինի 56ա	3	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 2-րդ եռամսյակի ընթացքում, մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:
5	39522250/1	փոշու հավաքման կտորներ	Լաթեր միկրոֆիբրայից: Նախատեսված կահույքի և պատուհանների մաքրման համար՝ չափսերը 40*40սմ: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	հատ	200	16 000	80	ք. Երևան, Պուշկինի 56ա	80	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 2-րդ եռամսյակի ընթացքում մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:
7	39812410/1	կահույքի փայլեցման միջոց	Կահույքը փայլեցնող միջոց այրոզոլային եղանակով, նախատեսված կահույքի պահպանման, փոշազտման և հետքերի վերացման համար: Անվտանգության սանիտարահիգիենիկ չափանիշներին համապատասխան, ալերգիա	հատ	900	9000	10	ք. Երևան, Պուշկինի 56ա	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 1-ին եռամսյակի ընթացքում, մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:

			չառաջացնող, հաճելի բուրմունքով, փաթեթավորումը՝ մետաղյա գլանաձև 300-350 մլ տարայով, մղիչով, արտադրողի մակնշմամբ: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:							
9	39812600/2	մաքրող մածուկներ և փոշիներ	Մաքրման հեղուկ Domestos կամ համարժեք, ունիվերսալ: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	հատ	630	12 600	20	ք. Երևան, Պուշկինի 56ա	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 1-ին եռամսյակի ընթացքում մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:
13	19641000/1	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ 60լ, փաթեթի մեջ 30 հատ: Պատրաստված է բարձր ճնշման պոլիէթիլենից, որի հաստությունը կազմում է 45 մկմ: Փաթեթավորումը օղակաձև փաթեթներով, գույնը սև: Ըստ ՀՀ-ում գործող սանիտարական նորմերին և կանոններին համապատասխան: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	հատ	240	24 000	100	ք. Երևան, Պուշկինի 56ա	100	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 50 հատ՝ 1-ին, 50 հատ՝ 3-րդ եռամսյակների ընթացքում մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:
14	19641000/2	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ 30լ, փաթեթի մեջ 10 հատ: Պատրաստված է բարձր ճնշման պոլիէթիլենից: Հաստությունը 40 մկմ: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	հատ	140	35 000	250	ք. Երևան, Պուշկինի 56ա	250	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 150 հատ՝ 1-ին, 100 հատ՝ 3-րդ եռամսյակների ընթացքում մինչև 2026 թվականի

										դեկտեմբերի 25-ը:
15	19641000/3	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ 120լ, փաթեթի մեջ 10 հատ: Պատրաստված է բարձր ճնշման պոլիէթիլենից: Հաստությունը 40 մկմ: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	հատ	290	72 500	250	ք. Երևան, Պուշկինի 56ա	250	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 150 հատ՝ 1-ին, 100 հատ՝ 3-րդ եռամսյակների ընթացքում մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:
20**	39531500/1	գորգի կտորներ	Մուտքի դռան գորգ խոնավադիմացկուն, վերին շերտը՝ 100% պոլիեսթեր, չափսը՝ 70*70 սմ, հաստությունը՝ 7մմ, գույնը՝ սև կամ մոխրագույն: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	քմ	5000	10 000	2	ք. Երևան, Պուշկինի 56ա	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 1-ին եռամսյակի ընթացքում , մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:
22**	39831280/1	ապակի մաքրելու միջոց	Ապակի լվացման միջոց՝ չափածրարված 0,7 լիտր ապակի լվանալու համար նախատեսված տարրայով: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և Մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի» «Միստր Մուսկուլ» կամ համարժեք: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	լիտր	600	18 000	30	ք. Երևան, Պուշկինի 56ա	30	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց օրվանից հետո 15 լ՝ 2-րդ, 15 լ՝ 4-րդ եռամսյակների ընթացքում մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:

23**	39831283/1	հատակի լվացման լաթ	Հատակի լվացման, մաքրման լաթ բարձր որակի, վատինանման, գույնը՝ մոխրագույն, չափերը՝ 50x70 և ավելի: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	հատ	500	35 000	70	ք. Երևան, Պուշկինի 56ա	70	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 30 հատ՝ 3-րդ, 40 հատ՝ 4-րդ եռամսյակների ընթացքում մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:
24**	39839100/1	գոգաթիակ, աղբը հավաքելու համար, ձողով	Հատակմաքրիչ խոզանակ և գոգաթիակ: Չափերը՝ գոգաթիակ՝ 25-27 սմ, խոզանակի պլաստմասե ձողի երկարությունը 100-110 սմ, թելիկները խիտ, խոզանակի լայնությունը 20-25 սմ: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	հատ	1500	7500	5	ք. Երևան, Պուշկինի 56ա	5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 3-րդ եռամսյակի ընթացքում, մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:
25	31685000/1	Էլեկտրական երկարացման լար	Չափսը՝ 3-5 տեղանոց, 5 մ: 110 Ա, 250 Վ միացման մանրակներով, սպիտակ գույնի:Անվտանգությունն՝ ըստ ԳՕՍՏ 12.2.007.0 -75 և ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3 -ի 150 –Ն որոշմամբ հաստատված “Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի“: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	հատ	1200	18000	15	ք. Երևան, Պուշկինի 56ա	15	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 1-ին եռամսյակի ընթացքում, մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:
26	31651400/1	Մեկուսիչ ժապավեններ	Գլանաձև, ինքնակպչուն, էլ. լարերի մեկուսացման համար (իզոլենտ) լայնությունը 18 մմ, գալարի հաստությունը 50 մմ: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ	հատ	250	1250	5	ք. Երևան, Պուշկինի 56ա	5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 1-ին եռամսյակի ընթացքում, մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:

			իրականացնում է Վաճառողը:							
27	44411710/1	Սանհան գույցի նստատեղեր	Զուգարանի նստատեղ՝ կափարիչով. Երկարությունը՝ 42սմ: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	հատ	2800	5600	2	ք. Երևան, Պուշկինի 56ա	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 1-ին եռամսյակի ընթացքում, մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:
30	39831273/1	Հատակի մաքրման նյութեր	Հատակը փայլեցնելու հեղուկ ունիվերսալ: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:	լիտր	650	13 000	20	ք. Երևան, Պուշկինի 56ա	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 10լ՝ 1-ին, 10լ՝ 3-րդ եռամսյակների ընթացքում, մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:

ԳՆՈՐԴ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ
Իրավաբանական հասցե՝
ք. Երևան, Պուշկինի 56ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011023067
ՀՎՀՀ 02572073

Գլխավոր քարտուղար՝ Անդրանիկ Եղոյան

Digitally signed by YEGHOYAN ANDRANIK 3402900629
Date: 2026.03.04 15:44:13 AMT

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Շող Ար>>ՍՊԸ
Ք.Երևան Մանթաշյան շենք 8բն 8
Ինեկո բանկ ՓԲԸ
2053122056071001
ՀՎՀՀ 02289417

Տնօրեն՝ Կարեն Պողոսյան

POGHOSYAN KAREN 1612830056

Подписано цифровой подписью: POGHOSYAN KAREN 1612830056
Дата: 2026.03.03 22:32:11 +04'00'

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 3 » մարտի 2026 թ. կնքված
ՄԻՊԱ-ՄԱԱՊՁԲ-26/13 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	39221410/1	ավելներ									4500	4500	4500	4 500
2	39221430/1	խոզանակ-սպունգ ապակի մաքրելու համար, ռետինե						5100	5100	5100	5100	5100	5100	5 100
3	39221490/1	սպունգներ			2600	2600	2600	2600	2600	2600	2600	2600	2600	2 600
4	39224331/1	դույլ պլաստմասե			10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10 500
5	39522250/1	փոշու հավաքման կտորներ		8000	8000	8000	8000	16000	16000	16000	16000	16000	16000	16 000
7	39812410/1	կահույքի փայլեցման միջոց		4500	4500	4500	4500	9000	9000	9000	9000	9000	9000	9000

9	39812600/2	մաքրող մածուկներ և փոշիներ		6300	6300	6300	6300	12600	12600	12600	12600	12600	12600	12 600
13	19641000/1	պոլիէթիլենային պարկ, աղբի համար		6000	12000	12000	12000	18000	18000	18000	24000	24000	24000	24 000
14	19641000/2	պոլիէթիլենային պարկ, աղբի համար		9100	28000	28000	28000	35000	35000	35000	35000	35000	35000	35 000
15	19641000/3	պոլիէթիլենային պարկ, աղբի համար		18850	36250	36250	36250	54400	54400	54400	72500	72500	72500	72 500
20	39531500/1	գորգի կտորներ		10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10 000
22	39831280/1	ապակի մաքրելու միջոց			9000	9000	9000	9000	9000	9000	18000	18000	18000	18 000
23	39831283/1	հատակի լվացման լաթ						15000	15000	15000	35000	35000	35000	35 000
24	39839100/1	գոգաթիակ, աղբը հավաքելու համար, ձողով						7500	7500	7500	7500	7500	7500	7500
25	31685000/1	Էլեկտրական երկարացման լար		4800	9000	9000	9000	13500	13500	13500	18000	18000	18000	18000
26	31651400/1	Մեկուսիչ ժապավեններ		1250	1250	1250	1250	1250	1250	1250	1250	1250	1250	1250
27	44411710/1	Սանհանգույցի նստատեղեր			5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600

30	39831273/1	Հատակի մաքրման նյութեր		6500	6500	6500	6500	13000	13000	13000	13000	13000	13000	13 000

** Վճարման է10նթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի
աշխատակազմ
Իրավաբանական հասցե՝
ք. Երևան, Պուշկինի 56ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011023067
ՀՎՀՀ 02572073

Գլխավոր քարտուղար՝ Անդրանիկ Եղոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by YEGHOYAN ANDRANIK 3402900629
Date: 2026.03.04 15:44:29 AMT

ՎԱՃԱՌՈՂ

<<Շող Ար>>ՍՊԸ
Ք.Երևան Մանթաշյան շենք 8բն 8
Ինեկո բանկ ՓԲԸ
2053122056071001
ՀՎՀՀ 02289417

Տնօրեն՝ Կարեն Պողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

POGHOSYAN KAREN 1612830056

Подписано цифровой подписью:
POGHOSYAN KAREN 1612830056
Дата: 2026.03.03 22:32:47 +04'00'

Հավելված N 3
« » փետրվարի 2026 թ. կնքված
ՄԻՊԱ-ՄԱԱՊՁԲ-26/13 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » փետրվարի 2026 թ. կնքված
ՄԻՊԱ-ՄԱԱՊՁԲ-26/13 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« » փետրվարի 2026 թ. կնքված
ՄԻՊԱ-ՄԱԱՊՁԲ-26/13 *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
գնորդի անվանումը վաճառողի անվանումը

«--------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.